

Վերանորոգվեցին սահմանամերձ համայնքների բուժկետերը

Սեպտեմբերի 11-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանն ընդունեց ֆրանսիական „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպության խորհրդի անդամ Ժան-Պոլ Մասնադային: Հանդիպման ընթացքում փորձագետը ներկայացրեց Ճամբարակի տարածքի Վահան և Դպրաբակ համայնքների, ինչպես նաև Սևան քաղաքի „Բողբոջ,, մանկապարտեզի բուժկետերում Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի միջև ստորագրված ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ֆրանսիական „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպության և Գրենոբլի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացված աշխատանքները: Ըստ ներկայացվածի՝ Վահանի բուժկետի հիմնանորոգման համար կազմակերպությունը ներդրել է 1 մլն 200 հազար դրամ, Դպրաբակի բուժկետի համար՝ 3 մլն 100 հազար դրամ, իսկ „Բողբոջ,, մանկապարտեզի բուժկետի համար 5600 եվրո, համաֆինանսավորմամբ՝ Սևանի քաղաքապետարանի: Ծրագրի շրջանակներում համայնքների բուժկետերում կատարվել են սենյակների և միջանցքների ներքին հարդարում, սանհանգույցներ կառուցում, այլ բնույթի աշխատանքներ: „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպության խորհրդի անդամ Ժան-Պոլ Մասնադայի տեղեկացմամբ Վահան համայնքում աշխատանքները ամբողջությամբ ավարտվել են, իսկ Դպրաբակում և Սևանի մանկապարտեզում դրանք կավարտվեն սեպտեմբերի վերջին: Մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը Գեղարքունիքի մարզպետի, իր և նշված համայնքների բնակչության անունից շնորհակալություն հայտնեց Իզերի Դեպարտամենտի գլխավոր խորհրդին, ֆինանսական աջակցության և իրականացված աշխատանքների համար: „Շնորհակալություն եմ հայտնում մարզում, և հատկապես սահմանամերձ համայնքներում նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար: Համոզված եղեք, որ ձեր կողմից իրականացված աշխատանքները մեծ նվեր են այդ համայնքների բնակիչների համար: Բացի համայնքների համար կարևոր լինելուց, այդ աշխատանքները նպաստում են նաև հայ-ֆրանսիական և Գեղարքունիք-Իզեր համագործակցության էլ ավելի խորացմանն ու ամրապնդմանը,, - իր խոսքում նշեց մարզպետի տեղակալ: Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին հաջորդ հանդիպման ընթացքում քննարկել Վարդենիսի տարածքի բուժամբուլատորիաների վերանորոգման, բժշկական պայուսակների տրամադրման և մասնագետների վերապատրաստման հարցերը: